Արձանագրություն
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի բաժնետերերի թիվ 02 արտահերթ ընդհանուր ժողովի

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովին բոլոր 804300 բաժնետոմսերի սեփականատերերից մասնակցել են (ուղղարկված քվեաթերթիկները վերադարձրել են) թվով 795522 հատ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող անձինք, որը կազմում է ձայնի իրավունք տվող բոլոր բաժնետեմսերի 98,9 %-ը:

Քվորումն ապահոված է ժողովը համարվում է կայացած:

Ժողովն անցկացվել է (վերադարձված քվեաթերթիկներով կատարված քվեարկության արդյունքներն ամփոփվել են) ք. Երևան, Պուշկինի 19 հասցեում 2008 թվականի հոկտեմբերի 17-ին:

Ժողովի Նախագահ Բարսեղ Բեգլարյան
Ժողովի քարտուղար Մարիետտա Ուզունյան
Ժողովն անցկացվել է հետևյալ օրակարգով.

1. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի ավելացում, լրացուցիչ հասարակ անվանական բաժնետոմսերի թողարկում:

2. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության կողմից լրացուցիչ թողարկվող հասարակ անվանական բաժնետոմսերը փակ տեղաբաշխմամբ ամբողջությամբ նախապես հայտնի գնորդ Եվրոպական Վերակառուցման և Զարգացման Բանկին տեղաբաշխելու մասին:

3. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության կողմից լրացուցիչ թողարկվող հասարակ անվանական բաժնետոմսերի դիմաց վճարման մասին:

Օրակարգի առաջին հարց - Կողմ են քվեարկել բաժնետերեի արտահերթ ընդհանուր Ժողվին մասնակիցների 99,9998 տոկոսը կամ 795520 բաժնետոմսի սեփականատերերը, դեմ չկա և ձեռնպահ 0,0002 տոկոսը կամ 2 բաժնետոմսի սեփականատեր:

Քվեարկության արդյունքներով Ժողովը որոշել է.

1. Ավելացնել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կանոնադրական կապիտալը 1340505000 (մեկ միլիարդ երեք հարյուր քառասուն միլիոն հինգ հարյուր հինգ հազար) ՀՀ դրամով՝ այն սահմանելով 5362005000 (հինգ միլիարդ երեք հարյուր վաթսուներկու միլիոն հինգ հազար) ՀՀ դրամ և այդ նպատակով լրացուցիչ թողարկել թվով 268101 հատ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի, 5000 ՀՀ դրամ անվանական աժեքով, հասարակ անվանական բաժնետոմս:

Օրակարգի երկրորդ հարց - ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի բաժնետերերը չեն օգտվել իրենց նախապատվության իրավունքից:

Լրացուցիչ թողարկված բաժնետոմսերը Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկին տեղաբաշխելուն կողմ են քվեարկել բաժնետերերի արտահերթ ընդհանուր Ժողովին մասնակիցների 99,998 տոկոսը կամ 795509 բաժնետոմսի սեփականատերեր, դեմ չկա և ձեռնպահ 0,002 տոկոսը կամ 13 բաժնետոմսի սեփականատեր:

Քվեարկության արդյունքներով Ժողովը որոշել է.

2. Լրացուցիչ թողարկվող թվով 268101 հատ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի , 5000 ՀՀ դրամ անվանական աժեքով, հասարակ անվանական բաժնետոմսերը փակ տեղաբաշխմամբ ամբողջությամբ 1 բաժնետոմսը՝ 7601 ՀՀ դրամ արժեքով տեղաբաշխել նախապես հայտնի գնորդ Եվրոպական Վերակառուցման և Զարգացման Բանկին:

Օրակարգի երրորդ հարց - Կողմ են քվեարկել բաժնետերերի արտահերթ ընդհանուր Ժողովին մասնակիցների 99,998 տոկոսը կամ 795504 բաժնետոմսի սեփականատերերը, դեմ չկա և ձեռնպահ 0,002 տոկոսը կամ 18 բաժնետոմսի սեփականատեր:

Քվեարկության արդյունքներով Ժողովը որոշել է.

3. Լրացուցիչ թողարկվող թվով 268101 հատ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի, 5000 ՀՀ դրամ անվանական աժեքով,հասարակ անվանական բաժնետոմսերի դիմաց վճարման ենթակա 2037835701 ՀՀ դրամ գումարը ենթակա է վճարման մինչև 2008 թվականի նոյեմբերի 29-ը:

Ժողովի նախագահ Բ.Բեգլարյան

Քարտուղար Մ.Ուզունյան